Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (8 դասաժամ), **հ.լեզու և գրականություն** (8 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ **թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է** ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության **մշակած** հարցաշարերի:**Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին**: Մրցույթին մասնակցելու համար **պետք է** ներկայացնել՝

-Դիմում(Ձեւ 1), **մեկ լուսանկար 3x4 չափի**

-**բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ**(դիպլոմ)

-**անձը հաստատող փաստաթուղթ,**

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ **աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն/առկայության դեպքում/,**

-. Ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինգրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում/

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 29-ից մինչև **սեպտեմբերի** 11-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, **բացի** շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 14-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ.Գեղարքունիք,Գ.Նժդեհի փ.1: Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 100521 հեռախոսահամարով: